№ 41 Մարտի 13 (25) 1880 Մարտի 13 (25) № 41

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր ընկերութեան ժողովը։—Ներքին տեսութիւն։ Գիւղատնտեսական նկատողութիւններ։ Նամակ Շուշուց։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Գարամանի գործը։—Յայտարարութիւններ։— Բանասիրական։ Խենթը։

ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

—

II

Մենք ասացինք մեր անցեալ յօդուածում որ մարտի 9-ին կայացած ժողովի մէջ մի քանի ընտրված պաշտօնական անձինք թէ ընկերութեան վարչութեան և թէ խմբագրական մասնաժողովի մէջ, բոլորովին անյարմար են իրանց յանձն առած պաշտօնի համար։

Մեզանում շատերը մինչև այժմ այն համոզմունքի են որ մի պաշտօնի մէջ ընտրվելը պատուի հարց է, նրանք չեն մտածում որ մարդը ընտրվում է ոչ թէ պատուի և փառքի համար, այլ գործ կատարելու համար։

Ահա մի օրինակ։ Ընդհանուր ժողովի մեծամասնութիւնը, որ բաղկացած էր վաճառականներից, ճանաչելով Պողոս Ղամբարեանին որպէս Թիֆլիսի առևտրական բանկի կառավարչին, ունենալով նրա հետ առևտրական և ֆինանսական յարաբերութիւններ, առանց մտածելու՝ կարող է նա արդեօք խմբագրական մասնաժողովի մէջ մասնակցել ընտրեց նրան ձայների բազմութեամբ խմբագրական մասնաժողովի անդամ։ Նախագահը չը բացատրեց թէ ինչ յատկութիւններ պէտք է ունենայ այն անձը որ քուէարկվում է խմբագրական մասնաժողովի մէջ, իսկ ժողովի մեծամասնութիւնը, որ ներկայանալով գրականական ընկերութեան նստին, շարունակում էր խօսել շաքարի գնի և փողի կուրսերի մասին, ի հարկէ հաւատացած էր, որ եթէ Ղամբարեանը յայտնի մարդ է և բանկի լաւ կառավարիչ է, ուրեմն կարող է և խմբագրական մասնաժողովի անդամ լինել։ Բայց մեզ զարմացնում է որ ինքն Ղամբարեանը յանձն առաւ այդ տեսակ պաշտօն և այնքան համեստութիւն չունեցաւ, որ հրաժարվէր այդ պաշտօնից։ Մենք կրկնում ենք. Ղամբարեանը կարող է բանկի ընդունակ կառավարիչ լինել, կարող է Մոսկվայի համալսարանի գիտնական մագիստրոս լինել, կարող է կառավարչական յատկութիւններ ունենալ և ընտրված լինել ընկերութեան վարչութեան մէջ,—բայց ի՞նչ գործ կարող է կատարել խմբագրական մասնաժողովի մէջ մի մարդ, որ ոչ մանկավարժ է, ոչ հայերէն գիտէ, որ ոչ թէ միայն իր կեանքի մէջ մի տող չէ գրել հայերէն լեզուով և յայտնի չէ մայրենի գրականութեան մէջ, բայց և իր հասարակական գործունէութեան ամբողջ ընթացքի ժամանակ արհամարհանքով էր վերաբերվում դէպի ժամանակակից մայրենի մամուլը, երբէք ձեռք վերցրած չէր մի հայոց լրագիր, չէ հետաքրքրվել իմանալ ինչ դպրոցներ կան հայերի մէջ և ինչ է այդ դպրոցների կարիքը....

Կարելի է հաւատացած լինել որ ոչ մի հայ գրող, ոչ մի հայ բանաստեղծ, ոչ մի հայ հեղինակ, ոչ մի հայ մանկավարժ կամ թարգմանիչ երբէք չեն համաձայնվի ենթարկել Ղամբարեանի

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

ԺԳ.

Բայց ինչ հանելուկ էր այդ. Ստեփանիկը առաջ տղայ, իսկ այժմ աղջիկ։

Պարզենք այդ հանելուկը։ Բայց նրա բանալին թաղված է մի փոքրիկ և տխուր պատմութեան մէջ։

Ծերունի խաչօի տան բակի մի խուլ կողմում, հովանաւորված չորս կաղամախի ծառերով, գտանվում էր մի գերեզման։ Ոչ խաչ, ոչ տապանաքար, և ոչ մի տառ անգամ չը կար նրա վրա։ Դա մի փոքրիկ քառակուսի թումբ էր, ծեփած գաճով, որ փոքր ինչ բարձրացած էր գետնի մակերևոյթից։ Շատ անգամ, գիշերային լռութեան պահուն, կարելի էր տեսնել ծերունուն, տարածված այդ անշուք հողաղամբարանի մօտ, թափում էր իր աչքերից յորդ արտասուքներ։ Ցանեցիք նոյնպէս մի առանձին տխրութեամբ էին անցկենում այդ գերեզմանի մօտից, որ, կարծես թէ, ամփոփում էր իր մէջ ամբողջ գերդաստանի ուրախութիւնը։ Ո՞վ էր թաղված այնտեղ։

Ծերունի խաչօն ունէր մի աղջիկ Սօնայ անունով. նա իր դէմքով շատ նման էր Ստեփանիկին, երբ Սօնան տասն և վեց տարեկան դարձաւ, ամեն կողմից խնդրում էին նրա ձեռքը, ոչ միայն նրա համար, որ Սօնան մի հարուստ ընտանիքի զաւակն էր, այլ առաւել այն պատճառով, որ Սօնան շատ սիրուն էր։ Հայրը երկար տարուբերվում էր փեսաների ընտրութեան մէջ, չը գիտէր որին տալ։ Բայց մի ցաւալի անցք վերջ տուեց Սօնայի բախտաւորութեանը։ Միանգամ գնաց նա դաշտը բանջար քաղելու, այլ ևս չը վերադարձաւ։ Շատ զրոյցներ եղան նրա կորստեան մասին. ոմանք ասում էին, թէ գետումը խեղդվել է. ոմանք ասում էին, թէ գազանները գիշատել են. ոմանք սնահաւատութեամբ հաստատում էին, թէ չարքերը գողացել են, և ոմանք ասում էին, թէ քրդերը յափշտակել են,—Ո՞րն էր ուղիղ, դժուար էր որոշել։ Շատ ուրտնեցին, շատ այս կողմ այն կողմ ընկան, բայց ոչինչ չօգնեց, և կորած աղջկայ մասին ոչինչ տեղեկութիւն ստանալ չը կարողացան, թէև նրա հայրը խոստացել էր լաւ վարձատրութիւն, ով որ մի ճիշտ լուր կը բերէ։

Անցան մի քանի չաբաթներ։

Մի օր յայտնվեցաւ խաչօի տանը մի քուրդ, բերելով իր հետ Ջորու վրա բարձած մի դագաղ։ Նրա մէջ դրած էր Սօնայի մարմինը։

Քրդի պատմութիւնից երևաց, որ ամբախտ աղջկան դաշտից առանցել էր մի քուրդ աղնուական, որը թէև իր տոհմով այնքան երևելի չէր, բայց իր ցեղի մէջ յայտնի էր, որպէս մի նշանաւոր եղեռնագործ։ Սօնան ուրիշ հնարք չը գտնելով այդ ատելի մարդու ձեռքից ազատվելու համար, իր գլխի արախչին վրա կարած ոսկի դրամներից *) մի քանիսը տալիս է մի պառաւ քրդուհու, խնդրելով իր համար թոյն գտնել։ Քրդուհին կաչառված ոսկիներից, կատարում է նրա խնդիրքը։ Սօնան մնանում է թոյնից։ Քրդերը նրա մարմինը չեն ընդունում իրանց գերեզմանատան մէջ, որովհետև հանգուցեալը մինչև իր վերջին շունչը ասում էր. «ես քրիստոնեայ եմ. ես հաւատս չեմ փոխիր»։ Մարմինը մնում է անթաղ։ Այդ հանգամանքից օգուտ է քաղում մի քուրդ, և իմանալով ում աղջիկն է նա, վեր է առնում նրա մարմինը և բերում հոր տունը, յոյս ունենալով, որ մի բան կը ստանայ։

Ոչ սակաւ մոլեռանդութեամբ վարվում է անբախտի դիակի հետ և հայ եկեղեցականութիւնը։ Պատճառ բերելով, թէ նա ինքնասպան է եղել, անօրէնի ձեռքումն է մեռել, չէ խոստովանվել, չէ հաղորդվել և այլն,—տէրտէրները թոյլ չեն տալիս Նրան թաղել և հայոց գերեզմանատում *)։ Ահա այդ էր պատճառը, որ Նրա գերեզմանը գտնվում էր հայրենական տան մէջ։ Այն որ հալածեց իր միջից եկեղեցին, ընդունեց իր մէջ ընտանիքը....

*) Աղաչկերտի և առհասարակ տաճկական Հայաստանի գիւղացի աղջիկների գլուխը ծածկված է լինում մի տեսակ արախչինով, որ ամբողջապէս զարդարած է դրամներով. հարուստներինը ոսկով, իսկ աղքատներինը արծաթով։

*) Այդ մոլեռանդութիւնը ինձ պատահել է տեսնել շատ տեղերում. զարմանալին այն է, որ ամբոխը այս կէտի մէջ նոյնպէս համաձայնվում է կղերի կարծիքին։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ այդ անբախտութիւնը ինչ դառնութիւն կը բերէր խաչօի գերդաստանի վրա։ Բայց նա ունեցաւ և ուրիշ ցաւալի հետևանքներ։ Սօնայի մայրը, Ռահանը, Ստեփանիկի ծնունդից յետոյ, չը կարողանալով տանել իր զաւակի այս օրինակ վախճանի դառն կսկիծը, օրըստօրէ հալվեցաւ, մաշվեցաւ և վերջապէս մեռաւ։ Եւ նոյն իսկ Ստեփանիկի վիճակի վրա այդ անցքը ունեցաւ իր առանձին ազդեցութիւնը։ Ստեփանիկը իսկապէս աղջիկ էր, թէև տղայի անունով և տղայի հագուստով պահված։ Նրա մկրտութեան անունը Լալայ էր։ Բայց ինչ նպատակով նրան այսպէս ծպտեալ կերպով էին մեծացնում։

Սօնայի մահը մի այնպիսի ցաւալի տպաւորութիւն թողեց հօր վրա, որ Ստեփանիկի ծնվելուց յետոյ, նա մի առանձին սնահաւատութեամբ նախագուշակում էր նոյնպիսի մի վախճան և այդ աղջկայ համար։ Նրա կասկածանքը անտեղի չէր, մանաւանդ իր երկրի վերաբերութեամբ, ուր իր աչքով տեսել էր հարիւրաւոր օրինակներ, ուր կոյս աղջիկների յափշտակութիւնը մահմետականներից համարեա սովորական էր դարձել։ Այդ պատճառով հայրը մտածեց Ստեփանիկին իբրև տղայ ներկայացնել և տղայի անունով պահել, մինչև նրա չափահաս լինելը։ Հօր դիտաւորութեանը հաճայն էր և թշուառ մայրը, որ շուտով վախճանվեցաւ, և չը կարողացաւ սնուցանել իր զաւակին։ Խաչօի ընտանիքի մէջ այդ խորհուրդը պահվում էր որպէս գաղտնիք ամենայն զգուշութեամբ։ Օտարներից այդ գաղտնիքը գիտէին երեք հոգի միայն՝ գիւղի քահանան, կնքահայրը և տատմէրը, որ վաղուց մեռած էր։

Լալան—մենք այսուհետև երբեմն իր իսկական անունով պէտք է կոչենք Ստեփանիկին—այժմ տասն և վեց տարեկան էր. մի հասակ, որի մէջ մտնելուց յետոյ գիւղացի աղջկան երկար տանը չեն պահում։ Հայրը մտածում էր նրան մարդու տալ։ Բայց դժուարութիւնը նրանումն էր, որ Լալան իբրև տղայ ճանաչված լինելով, ի հարկէ, ոչ աք չէր խնդրելու նրա ձեռքը։ Բացի դրանից, հայրը ցանկանում էր, որ իր փեսան մի օտար երկրացի լինի, որ առնէ, տանէ և հեռացնէ իր աղջկան, որպէս զի իր երկրում, իր ծանօթների մէջ չը յայտնվի հօր գործ դրած խորամանկութիւնը Լալայի պահպանութեան մասին, թէև այդ երկրում դա մի սովորական բան էր։ Բայց որտեղից պէտք էր գտնել այդ պայմաններին յարմար մի մարդ Լալայի համար։

Հայրը աչք ունէր մի պարոնի վրա, որ իրան կոչում էր Թոմաս Էֆէնդի,—մի չատախօս, խաբեբայ, կարճլիկ, կլորիկ մարդ, որ բացի մարդից ամեն բանի նման էր։ Ո՞ր տեղացի էր նա, յայտնի չէր. բայց իր ասելով, պօլսեցի էր և այնտեղ ամիրայ ազգականներ ունէր։ Լալայի եղբայրները սաստիկ ատում էին այդ հրէշին, ոչ թէ այն պատճառով, որ նա չափազանց այլանդակ դէմք ունէր, այլ առաւել նրա համար, որ սատկիկ ժանտ և անգութ մարդ էր։ Նա բոլորովին իրան հեռու էր պահում հայ հասարակութիւնից, խօսում էր միշտ թուրքերէն, և միշտ ընկած էր մուդիրների, գայմագամների և քուրդ բէկերի մօտ։ Նրանց անունով գիւղացի հայերին սպառնալիքներ էր կարդում և նրանց անունով պարծենում էր։ Թոմաս էֆէնդին արքունի մուլթէզիմ էր, այսինքն արքունի հարկերի և հասոյթների կապալառու։

Մուլթէզիմը նոյն նշանակութիւնը ունի գիւղացու համար, որպէս հոգեհան հրէշակը, դեը, սատանան մի սնահաւատի համար,—և որպէս այն բաները, որոնցից դողում է, սարսափում է գիւղացին։ Բայց ինչ բանից աւելի վախենում է գիւղացին, նրան աւելի էլ յարգում է։ Եթէ սատանան յայտնվէր գիւղացիների մէջ, նրան այնքան չէին ատի, կը սկսէին չողոքորթել։ Մարդը միշտ այսպէս վարվել է և վարվում է։ Մարդը իր ռամկութեան հասակում բարի և չար ոգիներին հաւասար կերպով էր պաշտում. երկուսին էլ զոհ էր մատուցանում։ Զարմանալին այն է, որ չարը համեմատաբար աւելի շատ զոհեր էր ընդունում։ «Բարին մերն է, մտածում էր ռամիկը, բայց չարին պէտք է գոհացնել, որ չարութիւն չը գործէ....»

Այս դատողութիւնները ի նկատի առնելով, կարելի է հեշտ բացատրել, թէ ինչու Թոմաս էֆէնդին ընդունված էր ծերունի խաչօի ընտանիքի մէջ, որպէս այս տան պատուաւոր ծանօթներից մէկը։ Ցանուտէր խաչօն, որպէս ժողովրդից ընտրված գիւղի գլխաւորը, որպէս պաշտօնական անձն, միշտ յարաբերութիւններ ունէր կապալառուի հետ, թէ տուրքերի, թէ հարկերի և թէ գիւղացոց միկութիւնների տասանորդի պատճառով։ Եւ այս առիթով էֆէնդին երթևեկութիւն ունէր խաչօի տանը, գալիս էր, շատ անգամ շաբաթներով մնում էր այնտեղ և հաւաքում էր

քննութեանը և խմբագրութեանը իրանց ինքնուրոյն գրուածքը կամ թարգմանութիւնը։

Ղամբարեանը, կարող էր, այո, վարչութեան մէջ ընտրվել, կարող էր մինչև անգամ նախագահ ընտրվել, դորան մենք համաձայն ենք։ Ուրիշ կողմից, որքան էլ համակրէինք կանանց իրաւունքներին, բայց հաւատացած ենք որ մեր կանայք դեռ ևս շատ անփորձ են վարչական գործերի մէջ։ Ինչ կը նշանակի տիկին Կատարինէ Նանգուլեանցին վարչութեան անդամ ընտրել։ Այն ինչ պատուելի տիկինը ամենամեծ օգուտ կարող էր բերել խմբագրական մասնաժողովի մէջ. նա մայր է, հետևում էր միշտ մանկավարժական, մանկական գրականութեանը, գեղեցիկ գիտէ հայերէն լեզուն, ինքն, որպէս սիրող, ուսուցչութիւն էր անում, նա միշտ կարդում է հայերէն, ծանօթ է հայոց կեանքին։

Վերջապէս առաջարկենք և մի ընդհանուր հարց. միթէ հայոց գրքեր թարգմանող և հրատարակող ընկերութիւնը պէտք է միմիայն մանկավարժական գրքեր հրատարակի։ Բացի Ղամբարեանցից, խմբագրական մասնաժողովի մեացած անդամները՝ Նահապետեան, Մանդինեան, Պալասան, օր. Տէր-Մարկոսեան, Բաբայեան (բժիշկ— մանկավարժ,) Զիգիանեան,—բոլորն էլ մանկավարժներ են։ Խմբագրական մասնաժողովի մէջ ոչ մի անձն չէ երևում որի անունը յայտնի լինէր ոչ թէ որպէս մանկավարժ, այլ որպէս հայոց ժամանակակից գրականութեան մէջ դիրք, հեղինակութիւն ունեցող անձն։ Այդ տեսակներին սեացրեց ընդհանուր ժողովը։ Թող մանկավարժներ էլ լինեն մասնաժողովի մէջ, բայց հարկաւոր է որ և գրականութեան մէջ փորձառու, անուն ունեցող անձինք լինէին մասնաժողովի մէջ։ Մասնաժողովի խմբագրութեանը առաջարկվում է մի գիրք մանկավարժական բովանդակութեամբ,—դրան քննում են մանկավարժները։ Բայց եթէ մի հեղինակութիւն առաջարկվի որ իր մէջ ոչինչ մանկավարժական բնաւորութիւն չունի, ո՞վ պէտք է քննի այդ տեսակ գիրք, երբ մասնաժողովի բոլոր անդամներն էլ մանկավարժներ են։ Ուրեմն այդ ընկերութիւնը առհասարակ հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւն չէ, այլ միայն մանկավարժական մի ընկերութիւն է։

Այժմ մի խօսք էլ պատուաւոր անդամների ընտրութեան մասին։ Կանոնադրութեան 5-րդ յօդուածը ասում է որ պատուոյ անդամ ընտրվում են այն անձինք, որոնք իրանց անձնական արժանաւորութեամբ, կամ իրանց հասարակական դրութեամբ կարող են առանձնապէս օգուտ տալ ընկերութեանը։

Այդ պատճառով սրբազան Այվազովսկու ընկերութեան պատուոյ անդամ ընտրվելու վրա մենք նայում ենք այն կէտից, որ սրբազանը երևի ընտրվել է գլխաւորապէս ոչ թէ այն պատճառով որ նա թեմիս առաջնորդ է, այլ այն պատճառով որ յայտնի անուն ունի հայոց գրականութեան մէջ։

Ուրիշ կողմից զարմանում ենք որ այն երեք անձինքներին, որոնք ընկերութեան հիմնողներ են եղել և որոնք ընկերութեան գոյութիւնից առաջ էլ աշխատել են և գրքեր են հրատարակել, ժողովը անտես առաւ և նրանց չընտրեց ընկերութեան պատուաւոր անդամներ։

Առհասարակ ամբողջ ընդհանուր ժողովը, այնքան մեծ սխալներ արաւ, այնքան շեղվեց կանոնադրութենից, այնքան անաջող էր ընտրութիւնների հետևանքը, որ ցանկալի կը լինէր որ մարտի 9-ի ընդհանուր ժողովը անվաւեր համարվէր, կայանար մի նոր ժողով և նշանակվէին նոր ընտրութիւններ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Անցեալ անգամ, ցորենակեր բզեզի վրա խօսելով, ուր և բացատրած էի ներկայ նկատողութիւններս գրելու նպատակը, ես, ի միջի այլոց, յիշած էի և ֆիլօքսերի համար։ Աւելորդ չեմ համարում ընթերցողաց ծանօթացնել գիւղատնտեսական բերքերի այս նոր թշնամու հետ, որ թէև առ այժմ ազատ է թողած մեր երկիրը, բայց և այնպէս անկարելի է ապահով կենալ, որ ժամանակով չի ապականի և մեր երկիրը, եթէ հարկաւոր նախազգուշութեան կանոնները պահպանելու չը լինենք։

Ֆիլօքսերը, կամ խաղողի ցեղը (phylloxera Vastatrix) մի տեսակ փոքրիկ միջատ է, որ անհամար քանակութեամբ խաղողի այգիներում երևալով (տեղափոխութեամբ) փչացնում, չորացնում է որթերը կամ վազերը։ Բարեբաղդաբար այդ աւերիչ միջատը Ռուսաստանում դուրս բերեց մի առաջին կարմիր թերթ, խոշոր և զանազան ձևի տառերով տպված։

—Ա՛հ, կարդա՛, տուեց նա տանուտէրի ձեռքը։

Տանուտէրը զարմացած նայում էր խոշոր տառերի վրա (ինչ որ մեծ է, ինչ որ խոշոր է ռամկի համար զարմանալի է) և եթէ նա թուրքերէն կարդալ գիտենար, կը հասկանար, որ այդ առաջին կարմիր թերթը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ թատրոնական աֆիշայ, որ տպված էր մի դերասանուհու բենեֆիսի համար։

Բայց Թոմաս էֆէնդին նկատեց նրան.

—Տանուտէր, այսպէս անքաղաքավարի կերպով չեն վարվում սուլթանի ֆիրմանի հետ. երբ ֆիրմանը ձեռք են առնում, նախ համբուրում են և ապա սկսում են կարդալ։

Ծերունին համբուրեց և խոնարհութեամբ յետ տուեց ֆիրմանը։

—Հազար անգամ ասում ես գիւղացիներին, թէ հիմայ հրամանը այսպէս է, թէ հարկերը աւելացրել են, դարձեալ չեն հասկանում, դարձեալ իրանց գիտցածն են ասում, խօսեց կապալառուն մի առանձին վրդովմունքով։—Ես էլ մարդ եմ, համբերութիւնս հատնում է, սկսում եմ ծեծել։ Ախար էշը, որ էշ է, մի անգամ ցխումը խրվում է, միւս անգամ եթէ վիզն էլ կտրես, այնտեղից չի անց կենայ։ Բայց այդ գիւղացիները էշի խելք էլ չունեն։ (Թոմաս էֆէնդին սովորութիւն ունէր իր օրինակները և համեմատութիւնները միշտ էշերի կեանքից վեր առնել)։—Լսիր, մի բան պատմեմ, տանուտէր խաչո, դու լաւ իմանում ես, որ Աքաչկերտի չատ գիւղերը իմ ձեռքումն են. մի անգամ մի գիւղացի հունձը հընձել էր, կալը կասել էր և ցորենի մաքուր չեղջը կիտել էր կալումը. ինձ կանչեց, որ չափել տամ և տասանորդը վեր առնեմ. ես պահանջեցի, որ տասանորդի փոխարէն զուտ փող տայ։ Նա պատասխանեց, թէ փող չի կարող տալ, և աւելացրեց, թէ դուք ցորեան ստանալու իրաւունք ունէք և ձեզ պատկանող ցորենը ստացէք։ (Ես երբէք համբերել կարող չեմ, երբ էշ գիւղացին իրաւունքի վրա է խօսում)։—Մտքումս ասեցի, ես քո հէրը կանիծեմ և քեզ ցոյց կը տամ, թէ ինչ բան է իրաւունքը։ Կալի ցորենը չը չափեցի և թողեցի այնպէս մնաց։ Անձրևները եկան և ցորենը խոնաւութիւնից ծլեց, այրվեցաւ, փտեց և ոչնչացաւ։ Այն ժամանակ գնացի և ասեցի, թէ ես իրաւունքից չեմ անց կենայ, տուր ցորենը։ Բայց որտեղից պիտի տար, ցորենը դարձել էր մի բորբոսած մոխրի կոյտ։—Հիմայ տասանորդի փոխարէն փող տուր, ասեցի նրան։ Փող չունէր, մի լաւ ծեծել տուեցի, հրամայեցի եղները ծախեցին և փողը ստացայ։ Հիմայ այն գիւղացին այնքան փափկացել է, որ ձուի բեռը կը տանէ և մի հատ էլ չի կոտրի։ Ինձ տեսնելիս, մի վերստ հեռաւորութեամբ կանգնում է և գլուխ է խոնարհեցնում։—Այսպէս պէտք է վարվել մարդերի հետ։

—Դա խղճմտանք է, հարցրեց ծերունի խաչն այնքան ցած ձայնով, որ կարծես, վախենում էր և չէր ուզում, որ իր ձայնը լսվի։

—Ի՞նչ ասել է խղճմտանք, պատասխանեց կապալառուն արհամարհական կերպով։—Կառավարութիւնը ուրիշ բան է, խղճմտանքը ուրիշ բան։ Դու թէև քառասուն տարի է այս գիւղի կառավարիչն ես, բայց դեռ չես հասկացել, թէ որպէս պէտք է կառավարել։ Դու խօ լսեցիր Նասրադին խօջայի առակը էշերի վերաբերութեամբ, բայց ես քեզ մի ուրիշ օրինակ էլ կը բերեմ։ Ցեմնում ես, մի փաչա նշանակվել է մի գաւառի կառավարիչ։ Հէնց որ նա անցնում է իր պաշտօնի զբաղումը, խկոյն բռնել է տալիս մի քանի հանդիպած մարդիկ, որպէս յանցաւորներ, բանտարկումէ և մինչև անգամ գլխատել է տալիս։ Գուցէ այն մարդիկը ամենևին յանցաւոր չէին, բայց փաչային պէտք էր մի քանի մարդիկ ոչնչացնել ժողովուրդը վախեցնելու համար։ Ահա ինչ է նշանակում կառավարութիւն։ Ժողովուրդը միշտ պէտք է երկիւղի մէջ պահել։ Եթէ ես այն գիւղացու կալի հետ այնպէս չը վարվէի, եթէ նրա ցորենը չը ոչնչացնէի, միւս գիւղացիները էլ ինձ մարդու տեղ չէին դնի, և ես այնուհետև չէի կարող ուզածս առնել։

Թոմաս էֆէնդին այնպէս հասարակ կերպով էր խօսում իր վարմունքների մասին, որպէս քուրդը պարծենալով պատմում է իր գործած աւազակութիւնները։ Ինչ զանազանութիւն կար այդ հայի և Ֆաթթահ-բէկի մէջ։—Այն զանազանութիւնը միայն, որ մէկը ցած և խորամանկ հարստահարիչ էր, իսկ միւսը—քաջ և մեծահոգի աւազակ։

Ահա այդ երկու անձինքներից մէկի հետ պիտի կապվէր թշուառ Լալայի վիճակը։ Բայց նրանից ոչ ոք չէր հարցնում, թէ ումն է սիրում նա....

(Կը շարունակվի)

քիր կապալառութեան վերաբերեալ արդիւնքները։ Տանուտէրի «օգան» այս տեսակ հիւրերի համար մի կատարեալ պանդոկ է գիւղերում։ Գայմգամը, մուդիրը, մալիթէզիմը, «ֆոգոնոր պաշտ» հաւաքող վարդապետը, վերջին զափթիան և մինչև անգամ վերջին մուրացկանը,—բոլորը այնտեղ են վազում։ Այդ հասարակութիւնը իրանց յատկութիւններով չատ չեն զանազանվում միմեանցից....

Ջրաղացի անտառում, ծերունի խաչօի որդիների գիշերային անաջող խրտրդի առաւօտն էր, երբ յայտնվեցաւ Թոմաս էֆէնդին Ս....գիւղում, իր հետ բերելով երկու զափթիաներ, որոնք միշտ անբաժան էին լինում նրանից։ Նա եկել էր ոչխարների և այլ անասունների հարկերը նշանակելու, որովհետև արդէն գարուն էր և գիւղացիները պէտք է իրանց անասունները ձեայլաղ (արօտատեղ) տանէին արածացնելու և ամառվայ տօթերից հեռու պահելու համար։ Վերջացնելով իր գործը, Թոմաս էֆէնդին տանուտէր խաչօի հետ դիմում էին դէպի նրա տունը։ Սուլթանը երբէք այն հպարտութեամբ չէ անցնում կ. Պոլսի փողոցներով, երբ գնում Այա-Սոֆիայի մզկիթը իր ուրբաթ աւուր աղօթքը մատուցանելու, որպէս այդ փոքրիկ մարդը անց էր կենում Ս....գիւղի փողոցներով։ Ցմբլիկ փորը դուրս գցած, քթի դէպի վեր բարձրացրած, նա անդադար նայում էր այս և այն կողմը, տեսնելու, թէ որքան գիւղացիներ գլուխ են տալիս նրան։ Նա այսօր հագած ունէր մի տեսակ մուշդիր, բազմաթիւ դեղին կոճակներով, և հաւատացնում էր, թէ վէզիրն է ուղարկել նրա համար։

Մտնելով տանուտէրի օդան, նա առանց սպասելու, հրամայեց, որ սուրճ տան, և ինքը կարդացրեց, թէ ինչ պէտք էր պատրաստել ճաշի համար։ Արքունի կապալառուն ինչ տուն որ մտնում է, իրան տան տէր է համարում։ Եթէ տանեցիք չը կատարեն նրա հաճոյքները, նա խստիւ պահանջել գիտէ....

Երբ նստեցին, ծերունի խաչօն ասաց նրան.

—Դուք, էֆէնդի, ի զուր այսօր ծեծել տուեցիք այն խեղճ գիւղացուն։

—Սխալվում էք, տանուտէր, պատասխանեց նա իր կատուի ձայնով։—գիւղացուն պէտք է ծեծել և չատ ծեծել. «էշին մինչև չը ծեծես, բեռը չի տանի»

—Բայց գիւղացին մեղ չունէր։

—Այդ մի և նոյն է, մեղ ունէր, թէ չունէր։ Այսօր մեղ չունէր, էգուց կարող է ունենալ։ Դու չես լսել Նասրադին խօջայի առակը. նրա էշերից մէկը կապը կտրեց ու փախաւ. նա փոխանակ փախչող էշի ետևից վազելու, որ նրան բռնէ ու պատժէ, եկաւ, սկսեց ծեծել միւս էշին, որ իր կապը չէր կտրել և իր տեղումը հանգիստ կանգնած էր։ Նրան ասեցին, թէ այդ խեղճը ինչ մեղ ունի, որ ծեծում ես։ Խօջան պատասխանեց.—դուք չէք իմանում, եթէ դա իր կապը կտրելու լինի, ինչպէս կը փախչի։

—Բայց ինձ յայտնի է, որ գիւղացին սուտ չէր խօսում, ես գիտեմ, որ նրա ոչխարների մեծ մասը քրդերը տարան, ասաց ծերունին, դարձեալ չը համոզվելով, թէ հանգիստ և անմեղ էշին պէտք էր պատժել յանցաւորի փոխարէն։

—Այդ ես էլ գիտեմ, տանուտէր, որ նրա ոչխարների մի մասը քրդերը գողացել են, պատասխանեց կապալառու էֆէնդին ծանրութեամբ։—Բայց եթէ ընդունելու լինեմ այսպիսի հաշիւներ, «ջուրը կը գայ, ջրաղացը կը տանէ» և ես այն ժամանակ իմ գրպանից պէտք է վճարեմ արքունի հարկը։ Անցեալ տարվայ ցուցակում այդ գիւղացու անունով 100 ոչխար է գրված, ես հարիւրի հարկը կը պահանջեմ. բայց եթէ նրանցից մի 50 կամ 60 հատ քրդերը գողացել են, ես ինչով եմ մեղաւոր. քրդերը ամեն օր գողանում են, եթէ մարդ են, թող թոյլ չը տան, որ գողանան։

—Պէտք է խղճմտանքով խօսել, էֆէնդի, պատասխանեց նրան տանուտէրը.—դուք իրաւունք ունէք պահանջել գիւղացու այնքան ոչխարների հարկը միայն, որքան նա պատրաստ ունի իր ձեռքում.—կորածի, մեռածի և կողոպտվածի համար նա պարտաւոր չէ հարկ վճարել։

—Ես ինչով կարող եմ ստուգել, թէ գողացել են, պատասխանեց կապալառուն բարկացած ձայնով.—գիւղացին կարող է թագցնել իր ոչխարները և ինձ ասել, որ կորել են, գողացել են, մեռել են, ինչ գիտեմ, հազար և մէկ այս տեսակ պատճառներ կարող է բերել։

Տանուտէրը ոչինչ չը խօսեց։

—Բայց դուք չէք տեսել այդ նոր ֆիրմանը, որ սուլթանը ուղարկել է ինձ, եթէ գիտենայիք նրա մէջ ինչ է գրված, այսպէս չէիք խօսի, տանուտէր։

Եւ նա դուրս բերեց իր ծոցից մի մեծ ծրար, հանեց նրա միջից թղթերի մի փաթոթ, և զգուշութեամբ մինը միւսի ետևից բաց անելով, վերջապէս դուրս բերեց մի առանձին կարմիր թերթ, խոշոր և զանազան ձևի տառերով տպված։

—Ա՛հ, կարդա՛, տուեց նա տանուտէրի ձեռքը։

Տանուտէրը զարմացած նայում էր խոշոր տառերի վրա (ինչ որ մեծ է, ինչ որ խոշոր է ռամկի համար զարմանալի է) և եթէ նա թուրքերէն կարդալ գիտենար, կը հասկանար, որ այդ առաջին կարմիր թերթը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ թատրոնական աֆիշայ, որ տպված էր մի դերասանուհու բենեֆիսի համար։

Բայց Թոմաս էֆէնդին նկատեց նրան.

—Տանուտէր, այսպէս անքաղաքավարի կերպով չեն վարվում սուլթանի ֆիրմանի հետ. երբ ֆիրմանը ձեռք են առնում, նախ համբուրում են և ապա սկսում են կարդալ։

Ծերունին համբուրեց և խոնարհութեամբ յետ տուեց ֆիրմանը։

—Հազար անգամ ասում ես գիւղացիներին, թէ հիմայ հրամանը այսպէս է, թէ հարկերը աւելացրել են, դարձեալ չեն հասկանում, դարձեալ իրանց գիտցածն են ասում, խօսեց կապալառուն մի առանձին վրդովմունքով։—Ես էլ մարդ եմ, համբերութիւնս հատնում է, սկսում եմ ծեծել։ Ախար էշը, որ էշ է, մի անգամ ցխումը խրվում է, միւս անգամ եթէ վիզն էլ կտրես, այնտեղից չի անց կենայ։ Բայց այդ գիւղացիները էշի խելք էլ չունեն։ (Թոմաս էֆէնդին սովորութիւն ունէր իր օրինակները և համեմատութիւնները միշտ էշերի կեանքից վեր առնել)։—Լսիր, մի բան պատմեմ, տանուտէր խաչօ, դու լաւ իմանում ես, որ Աքաչկերտի չատ գիւղերը իմ ձեռքումն են. մի անգամ մի գիւղացի հունձը հընձել էր, կալը կասել էր և ցորենի մաքուր չեղջը կիտել էր կալումը. ինձ կանչեց, որ չափել տամ և տասանորդը վեր առնեմ. ես պահանջեցի, որ տասանորդի փոխարէն զուտ փող տայ։ Նա պատասխանեց, թէ փող չի կարող տալ, և աւելացրեց, թէ դուք ցորեան ստանալու իրաւունք ունէք և ձեզ պատկանող ցորենը ստացէք։ (Ես երբէք համբերել կարող չեմ, երբ էշ գիւղացին իրաւունքի վրա է խօսում)։—Մտքումս ասեցի, ես քո հէրը կանիծեմ և քեզ ցոյց կը տամ, թէ ինչ բան է իրաւունքը։ Կալի ցորենը չը չափեցի և թողեցի այնպէս մնաց։ Անձրևները եկան և ցորենը խոնաւութիւնից ծլեց, այրվեցաւ, փտեց և ոչնչացաւ։ Այն ժամանակ գնացի և ասեցի, թէ ես իրաւունքից չեմ անց կենայ, տուր ցո-